ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
<<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 նոյեմբերի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Սարգսյանը, Գ. Հունանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

<< ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն>> ծածկագրով մրցույթի մասնակից ընկերությունների բանակցություններին մասնակցող ներկայացուցիչներ՝

<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ – տնօրեն Արշավիր Մարտիկյան, գլխ. ինժեներ Գագիկ Ղազարյան,
<<Ջրտուք>> ՍՊԸ – տնօրեն Արմեն Ավագյան
<<Մոդուլ>> ՍՊԸ – ինժեներ՝ Հայսեր Պողոսյան, ինժեներ՝ Անդրանիկ Հովհաննիսյան

1. <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ. Ջրային կոմիտեի կարիքների համար՝ Վերականգնվող խորքային հորերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների շուրջ բանակցություններ:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Վ. Օհանջանյանը և հրապարակեց յուրաքանչյուր մասնակցի տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը՝ մյուս մասնակիցների համար:

2. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանակցությունների ընթացքում մասնակից ընկերությունների ներկայացուցիչների կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

3. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն>> ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ համարել.

	Մասնակցի անվանումը	Գինն առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/	ԱԱՀ /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/
Չափաբաժին 1 /նախահաշվային գին՝ **9 900 000** ՀՀ դրամ/ նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման - թվով 22 վերականգնվող խորքային հորերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ				
1	<<Մոդուլ>> ՍՊԸ	6 196 000	1 239 200	7 435 200
2	<<Ջրտուք>> ՍՊԸ	9 500 000	1 900 000	11 400 000
3	<<Թիվ 28 ՇՄՇ>> ԲԲԸ	18 333 000	3 666 600	21 999 600
Չափաբաժին 2 /նախահաշվային գին՝ **23 100 000** ՀՀ դրամ/ նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման - թվով 54 վերականգնվող խորքային հորերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ				
1	<<Մոդուլ>> ՍՊԸ	15 210 000	3 042 000	18 252 000
2	<<Ջրտուք>> ՍՊԸ	23 000 000	4 600 000	27 600 000
3	<<Հայջրնախագիծ ինստիտուտ>> ՓԲԸ	37 800 000	7 560 000	45 360 000

2. Հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած <<Մոդուլ>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն>> ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

3. 1-ին և 2-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած <<Մոդուլ>> ՍՊԸ-ին առաջարկել՝ **երեք աշխատանքային օրվա ընթացքում** էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-20/1-Ն>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելվածներ 3 և 3.1):

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Վ. Օհանջանյան

Անդամներ _____ Կ. Սարգսյան

_____ Գ. Հունանյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան